



Մեծ
ակոբ
արադեանց

ԱՐԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՁԵԿՈՒՅՑՆԵՐ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱՍՍՏՐԱՆ

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3
Հ 176

Այս գրքին
հրատարակութեան հովանաւորն է
Թորոնթոյի
Համազգային Հայ Կրթական և
Մշակութային Միութեան
«Գլաժոր» մասնաճիւղի հիմնած
«Յակոբ Կարապենց»ի անուան
հրատարակչական Ֆոնտը
Թորոնթօ 2022

Միջազգային գիտաժողով նվիրված
Հակոբ Կարապենցին

Հակոբ Կարապենց: Ձեկույցների ժողովա-
ծու.:
Հ 176 Եր.: Լուսակն, 2022.- 308 էջ:

ՀՏԴ 82.0
ԳՄԴ 83.3

ISBN 978-9939-899-11-4

© Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 2022 թ.
© Լուսակն, 2022 թ.

ԱՌՋԱՇՏԱԿԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
նվիրված

ՎԻՅԱԿՈՒԲ
ԱՐԱՊԵՆՑԻՆ

Ձեկույցների ժողովածու



Համազգային
հայ կրթական
և մշակութային
միություն



Երևանի
պետական
համալսարան

Երևան
2022

ՎՃԳՎՅԻՆԻ ԵՒ «ՕՏԱՐԻ» ՉՈՒԳՎՅԵՌՆԵՐԸ ԿՎՐՎՊԵՆՑԻ ՊՂՏԱՌԻՎՕՐՆԵՐՈՒՄ

Գրականության մեջ Կարապետը կանգնեց իր համար թանկ հանդիպակաց երկու քաղաքակրթությունների սահմանագծին: Կեանքի եզրագծին մշակեց «երկու աշխարհ» հակակշիռների հասկացությունը: Բայց «օտարի» ու ներաշխարհի սրուած հակադրության մոդելի խաղարկումները վերուստ տրուած էին իրեն. առաջին իսկ գեղարուեստական յայտը դա էր յուշում՝ «Անծանօթ հոգիներ»: Ժամանակի գետը իր համար պիտի որ սառը լինէր առաջին սարսուռի նման, քանի որ դա հանդիպում էր ծանօթ եւ անծանօթ գրական տիպարների հետ, ուր, ինչպէս գրում է ինքը, «Ենթագիտակցութիւնը շարունակ ազդում է մեր գիտակցութեան վրայ»¹: Հակուտնեայ եւ յաակնոտ ազդեցութիւնների մասին է խօսքը՝ նախ, լեզուն, ապա դաւադիր ենթագիտակցութիւնը, որը «...լողում ու հոսում է յորձանքի հեփ զուգընթաց»՝ արձակագրի երեսակայութեան մէջ «ձեւ ու կերպարանք սրանալու համար»²: Այդպէս է ծնունդ առնում արդիականութիւնը գրականութեան էջերում, «ուր արտաքննապէս անյարիր բովանդակութեան փակ...«միշտ ներկայ է բնազդային պայթուցիկ եռանդը՝ հեղզիեփ ձեւ սրանալով փոթորկոյ փծեւ քառսից: Այս արուեստանքը լաւագոյնս կատարելագործել է Ջեյմս Ջոյսը, մեր մէջ՝ Յակոբ Օշականը»³:

Պատմութեան մէջ ինքնութիւն որսալու, իրեն ներքնապէս հասկանալու, բացայայտելու կամ իրենից փախչելու համար Յ. Կարապետ-

1 Յ. Կարապետ, Երկու աշխարհ. Գրական փորձագրութիւններ, Ուրբերքում, 1992, էջ 206:
2 Նոյն տեղում:
3 Նոյն տեղում:

ՄԻՋՆԱԿՅՈՒՆ ԳԻՏԱՎՈՐՈՒՄ ԵՒ ԿՐԹԱԿՐԹՈՒՄ

ցի առանցքային կերպարը գրեթէ միշտ կանգնած է օտարի առջեւ: Գուցէ կարելու է չէ՛ «օտարութեան» բարդոյթը հերոսն է յարթահարելու, թէ՛ հեղինակը: Գուցէ՛ հոգեվիճակ է, մենութեան կամ ժխորի երկընտրանք, ինչպէս հերոսներից ուս Վլադիմիրի պարագան է («Անծանօթ հոգիներ»): Սպասելու ենք հերոսի ներքին պոթելումին, որ արձակագիրը «հիւանդագին սանտիմենտալիզմ» կամ «գաւեշտ» է՝⁴ համարում, թէ՛ ամէն ինչ կը լուծուի ներքին դրամայի փակուած օղակներում, որը պարզապէս ներզգայութիւն է: Նոյն պատմութեան մէջ ամերիկեան պոռոտաների հարազատ խոռվում Սուրենեանը կորցրել է իր ինքնութիւնն ու ինքնուրոյնութիւնը, դարձել «մասնիկ»: Նրա մէջ հայը լուծում է ամերիկեան քաղաքային մայրսեան պատկերին. հեքեայային թեւեր ունեցող Նիւ Եորքի «Թայմզ Արուէրը մի իրական փոստահանդէս է»⁵, «իսկ ամէն ոք ունէր իր ներքին կղզին, որին կառչած՝ պահպանում էր իր գոյութիւնը»⁶: Սուրենեանը եկել է հարեցողութեան տրուած, երկփեղկուած Վլադիմիրի տուն, որը կնոջ հետ իրենից անելի ողբերգական վիճակում է, քանի որ այս ամերիկեաներից Պետերբուրգ վերադարձ չկայ: Յաւը ուսի հետ նոյն յայտարարն է: Վտարանդիները գիտակցում են, որ ծանրագոյն բեղը իրենց անցեալն է, որից խուսափում, փրկութիւն չունեն:

Ամէն մէկը, յիրափ, ներքին կղզի է, ուրեմն՝ մնում է Յ. Կարապետցի հրամցրած, բայց դեռ յիսնական թթ. երկրորդ կէսին հերոսներին անհաղորդ անծանօթ սիւրուէալիզմի աւանդական լուծումը՝ մոռանալ ինքնութիւնը:

Վերցնենք մէկ այլ ոճային կառոյց: «Որեւէ փեղից մինչեւ այսօր» պատմութեան սկզբնական հատուածում արձակագիրը ներկայացնում է ստեղծագործական պատմութիւնների մէջ իր, այսինքն՝ հեղինակի եւ իր հերոսների յարաբերակցութիւնը, ուր կայ խորութեան սահման եւ նրանց մօտենալու, այդ խորութիւնը յարթահարելու ցնակեալը իր-րեւ խզումի, իբրեւ անծանօթ հոգիների յղացք, գեղարուեստական գերխնդիր է. «Ամէն անգամ, երբ գրիչը ձեռքս եմ վերցնում, - խոստովանում է ընթերցողին անպաճոյճ անկեղծութեամբ, - ուզում եմ գրել չգրուած պատմութիւնը հոգիների, որ կային, կան ու պիտի լինեն: Գրիչի սրրուկ չեմ: Երբեմն գրում եմ մարիսոլ կամ գրամբենայի վրայ, սակայն յաճախ ուրիշների ամենախորունկ պատմութիւններն իսկ

4 Յ. Կարապետ, Անծանօթ հոգիներ, Ուաշինգթոն, 1970, էջ 146:
5 Նոյն տեղում, էջ 126:
6 Նոյն տեղում, էջ 127:

գրում են իմ հոգու պարփրիզում: Կարճ: Գրում են, քանի դեռ կեանքը կա»⁷: Գրում է, քանի դեռ փոխըմբռնման կարօտ մէկ ընթերցող ունենալու է իր կարիքը:

3. Կարապետի համար գրել նշանակում է փրկել ընթերցողներին, որոնք մնում են ինչ-որ մի տեղ թէքէտանական «անձանօթ հոգու» հեռատրուբեան վրայ: Մեզ թուում է՝ ամերիկահայ պատմաաճագրի առաջին գրքի խորագիրն աճանցում է Վահան Թէքէտանի «Երեք ձուկ» երից, որոնք յետագայում, 1933-ին մաս կազմեցին բանաստեղծի լաւագոյն փարիզեան «Մէր» ժողովածուին եւ բացեցին այն: Մասնաւորապէս այս առիթով 3. Կարապետը ցուցադրում է գեղագիտական նշանատրուբեան եւ վերաբերմունք:

Նախ, մեզ գրաւում է 4. Թէքէտանի «Ընթերցողին» ծրագրային հնչեակի «անձանօթ անցորդներից» իրեն անցնող շահագրգիռ այն լաւրանը, որտեղ ակնյայտ է բանաստեղծի եւ վարդուայ ընթերցողի հասնողիպման կանխավայելքը: Գնում է պայքար այդ բանաստեղծական հոգուն անմնացորդ շնորհուելու համար, երբ արուեստագետն ապրում է բուն երկուտրուբեանը: չէ՛ որ հոգին իրենն է, միմիայն իրենը: Բայց գրական տարածքներում կան «անձանօթ հոգիները» եւ նրանց հետ անիրաճեշտ շփումի պարագան: Բացուել, ընկալելի, նախընտրելի, սիրելի լինել: Գրականութեանը շփման կիզակէտն է՝ «արունստագեղի անհպելի հոգին» ընթերցողին կարդալու եղանակը: 4. Թէքէտանը, նրանից յետոյ 3. Կարապետը քննում են հենց այդ յարաբերութեանը: Մեր երկու արուեստագէտները հասկանալիութեան բարդոյթների՝ «հրաբուխի» միջով են անցնում. թանկ են նրանց համար իրենց հոգու եւ «լոյսը», եւ «մթութեանը»: Ուրե՛մն՝

*Հոգիս իմս է, եւ այսօր կը մտածեմ թէ հանրկ էր
Ձայն այս չափով ալ միայն անցորդներուն ճանչցընել,
Մինչ կ'ուզէի քիչերուն ամբողջովին գայն յանձնել»⁸:*

Թերեա 3. Կարապետը կերպարաստեղծման ճանապարհին որտում է Համաստեղի հերոսների արձագանգն իր մէկ այլ՝ «Որեւէ տրեղից մինչեւ այստեղ» պատմութեանը:

Պատկանելի ազգանուն ունեցող Արտաւազը Սրմաքէշխանեանը Քանգաս Միթիում անակնկալ ու արտաքինից անընկալեալն որտում է հոգի տնքոցը գրեթէ Համաստեղի պատանի յայտնի հերոս

7 Նոյն տեղում, էջ 151:
8 4. Թէքէտան, Գաղտնի պարտեզ, Պէրոյթ-Երևան, 2003, էջ 95:

Միջոյի պէս, որը հողերի խորքերում վազվզող միջատների ծայնից բերկրանց էր ապրում: Միայն թէ մի տարբերութեամբ՝ Արտաւազը Քաղաքաբնակ է, չունի Միջոյի անսահման ազատութեանը՝ դաշտերի մէջ պարկելու եւ լսելու անդերերկրային ծայներ. «օտարները» խենթ կը համարեն: Համաստեղի հերոսը գլուխը դնում էր ուղղակի հողին ու լաւում լողութեանը: Փերչենճը ոգեկոչող ամերիկահայ գրողը հայրենի հողի հետ շփումն ընկալում է իբրեւ բնութեան ու մարդու հետ տարբերի ներգգայութեան: Երկխօսութեան կայ Համաստեղի ու Կարապետի միջեւ, բարի նախանձ իրենից երեսուն տարով աւագ գրողի հանդէպ, որն իր հետ ամերիկա բերել է հողի ներքին երերոյթը՝ «ջղջղոցը»:

Քաղաքային պատկերի օրինակով գիտը թիրախային իմաստ է ձեռք բերում. հողին գալիս է փոխարինելու հոգիների տնքոցը:

Գրողի եւ մեզապոլիսներում յայտնուած պանդուխտ-վտարանդիի սահմանագատումն է սա, միջօճներին դաշտերում մէկընդմիշտ թողած հայ պարզ հոգիների ներքին կոխը, ուր «անձանօթը» իր մէջ է՝ առանց բաճանումի. «Քաղաքը ընկած էր մի շարք քմահաճ բլուրների ծոցում եւ կծկուել, ամփոփուել էր ինքն իր մէջ: Մինչեւ երեկոյ վերիվայր վազող փողոցներում եռուզեռ էր տրորում, սակայն մթնշաղը իջնելուն պէս մարդիկ փակում էին իրենց պարզ, կոկիկ միայարկանի տներում, լոյսերը վառում, վարագոյրները վայր ջաշում եւ սպասում վաղուան»⁹: «Օտարի» կշռոյթն իրենց մէջ է ներծծուելու, փրկութեան չկայ կարծես: Այլ բառով՝ հայ մարդու հոգու սփութագցումի նախադրանն է տեսնում հերոսներին: Եզրայանգումները մէկից անելի չերեւացող «չոր» տխրութեան են բերում 3. Կարապետի տողերին. ահա մի քանիսը խտացած իրար յաջորդող մտորումներից՝ «Միթէ հոգիների տնքոցը բաւական չե՛», «Կեանքը դարձել էր մի բարի սովորութեան, իսկ գայիքի տնքոցն ու երազը՝ մի տեսակ հոգեկան մարգանք», «Կան մարդիկ, որ հողը (երկիրը այլաբանօրէն Ս. Դ.) չեն տեսել եւ, փոխարէն, հոգիների աշխարհ են ստեղծել իրենց համար»¹⁰: Եւ անակնկալ երկխօսութեան տոյքան անակնկալ շարունակութեանը, որը պիտի արտաբերի Արտաւազը՝ «-Հոգին՛ք ըր,- շշնջաց ծխի միջից,- հոգիները ասացիր... Սակայն առանց հողի կանչի հոգիները խամրում են, սառում, չորանում»¹¹:

Այստեղ է մեր ակնարկած ամերիկեան հեռակայ երկխօսութեանը Համաստեղի եւ 3. Կարապետի միջեւ, «օտարի» անխուսափ ներխուժ-

9 3. Կարապետ, Անձանօթ հոգիներ, էջ 153:
10 Նոյն տեղում:
11 Նոյն տեղում, էջ 154:

գրում են իմ հոգու պարփրիզում: Կարճ: Գրում են, քանի դեռ կեանքը կա»⁷: Գրում է, քանի դեռ փոխըմբռնման կարօտ մէկ ընթերցող ունենալու է իր կարիքը:

3. Կարապետի համար գրել նշանակում է փրկել ընթերցողներին, որոնք մնում են ինչ-որ մի տեղ թէքէտանական «անձանօթ հոգու» հեռատրուբեան վրայ: Մեզ թույմ է՝ ամերիկահայ պատմաաճագրի առաջին գրքի խորագիրն աճանցում է Վահան Թէքէտանի «Երեք ձօն» երից, որոնք յետագայում, 1933-ին մաս կազմեցին բանաստեղծի լաւագոյն փարիզեան «Մէր» ժողովաճովին եւ բացեցին այն: Մասնաւորապէս այս առիթով 3. Կարապետը ցուցադրում է գեղագիտական նշանատրութիւն եւ վերաբերմունք:

Նախ, մեզ գրաւում է Կ. Թէքէտանի «Ընթերցողին» ծրագրային հնչեակի «անձանօթ անցորդներից» իրեն անցնող շահագրգիռ այն լաւրանը, որտեղ ակնյայտ է բանաստեղծի եւ վարդուայ ընթերցողի հասնդիպման կանխավայելքը: Գնում է պայքար այդ բանաստեղճական հոգուն անմնացորդ շնորհուելու համար, երբ արուեստագետն ապրում է բուն երկուտրութիւնը: չէ՛ որ հոգին իրենն է, միմիայն իրենը: Բայց գրական տարաճքներում կան «անձանօթ հոգիները» եւ նրանց հետ անիրաճեշտ շփումի պարագան: Բացուել, ընկալելի, նախընտրելի, սիրելի լինել: Գրականութիւնը շփման կիզակէտն է՝ «արունստագեղի անհպելի հոգին» ընթերցողին կարդալու եղանակը: Կ. Թէքէտանը, նրանից յետոյ 3. Կարապետը քննում են հենց այդ յարաբերութիւնը: Մեր երկու արուեստագէտները հասկանալիութեան բարդոյթների՝ «հրաբուխի» միջով են անցնում. թանկ են նրանց համար իրենց հոգու եւ «լոյսը», եւ «մթութիւնը»: Ուրե՛մն՝

*Հոգիս իմս է, եւ այսօր կը մրաճեմ թէ հանկ էր
Ձայն այս չափով ալ միայն անցորդներուն ճանչցընել,
Մինչ կ'ուզէի քիչերուն ամբողջովին գայն յանձնել»⁸:*

Թերեա 3. Կարապետը կերպարատեղճման ճանապարհին որտում է Համաստեղի հերոսների արճագանգն իր մէկ այլ՝ «Որեւէ տեղից մինչեւ այստեղ» պատմուաճքում:

Պատկանելի ազգանուն ունեցող Արտաւազը Սրմաքէշխանեանը Քանգաս Միթիում անակնկալ ու արտաքինից անընակասօրէն որտում է հողի տնքըը գրեթէ Համաստեղի պատանի յայտնի հերոս

7 Նոյն տեղում, էջ 151:
8 Կ. Թէքէտան, Գաղտնի պարտեզ, Պէլոսի-երևան, 2003, էջ 95:

Միջոյի պէս, որը հողերի խորքերում վազվզող միջատների ճայնից բերկրանց էր ապրում: Միայն թէ մի տարբերութեամբ՝ Արտաւազը Քաղաքաբնակ է, չունի Միջոյի անսահման ազատութիւնը՝ դաշտերի մէջ պարկելու եւ լսելու անդերկրային ճայներ. «օտարները» խենթ կը համարեն: Համաստեղի հերոսը գլուխը դնում էր ուղղակի հողին ու լաւում լողութիւնը: Փերչենճը ոգեկոչող ամերիկահայ գրողը հայրենի հողի հետ շփումն ընկալում է իբրեւ բնութեան ու մարդու հետ տարբերի ներգգայութիւն: Երկխօսութիւն կայ Համաստեղի ու Կարապետի միջեւ, բարի նախանճ իրենից երեսուն տարով աւազ գրողի հանդէպ, որն իր հետ Ամերիկա բերել է հողի ներքին երերոյքը՝ «ջղջղոցը»:

Քաղաքային պատկերի օրինակով գիտը թիրախային իմաստ է ձեռք բերում. հողին գալիս է փոխարինելու հոգիների տնքըը:

Գրողի եւ մեզապոլիսներում յայտնուաճ պանդուխտ-վտարանդիի սահմանագատումն է սա, միջօճներին դաշտերում մէկընդմիշտ թողաճ հայ պարզ հոգիների ներքին կոխը, ուր «անձանօթը» իր մէջ է՝ առանց բաճանումի. «Քաղաքը ընկաճ էր մի շարք քմահաճ բլուրների ծոցում եւ կճկուել, ամփոփուել էր ինքն իր մէջ: Մինչեւ երեկոյ վերիվայր վազող փողոցներում եռուզեռ էր տիրում, սակայն մթնշաղը իջնելուն պէս մարդիկ փակում էին իրենց պարզ, կոկիկ միայարկանի տներում, լոյսերը վառում, վարագոյրները վայր քաշում եւ սպասում վաղուան»⁹: «Օտարի» կշոռոյթն իրենց մէջ է ներճնուելու, փրկութիւն չկայ կարճես: Այլ բառով՝ հայ մարդու հոգու սփութքացումի նախադրանն է տեսնում հերոսներին: Եզրայանգումները մէկից անելի չերեւացող «չոր» տխրութիւն են բերում 3. Կարապետի տողերին. ահա մի քանիսը խտացաճ իրար յաջորդող մտորումներից՝ «Միթէ հոգիների տնքըը բաւական չե՛», «Կեանքը դարճել էր մի բարի սովորութիւն, իսկ գայիքի տնքըն ու երազը՝ մի տեսակ հոգեկան մարգանք», «Կան մարդիկ, որ հողը (երկիրը այլաբանօրէն Ս. Դ.) չեն տեսել եւ, փոխարէն, հոգիների աշխարհ են ստեղճել իրենց համար»¹⁰: Եւ անակնկալ երկխօսութեան տոյքան անակնկալ շարունակութիւնը, որը պիտի արտաբերի Արտաւազը՝ «-Հոգինն ըր,- շշնջաց ճխի միջից,- հոգիները ասացիր... Սակայն առանց հողի կանչի հոգիները խամրում են, սառում, չորանում»¹¹:

Այստեղ է մեր ակնարկաճ ամերիկեան հեռակայ երկխօսութիւնը Համաստեղի եւ 3. Կարապետի միջեւ, «օտարի» անխուսափ ներխուճ-

9 3. Կարապետ, Անճանօթ հոգիներ, էջ 153:
10 Նոյն տեղում:
11 Նոյն տեղում, էջ 154:

ման ու հողի կարօտն անանց պահել ձգտող հոգիների միջև: Ամիրական, պատրանքի խաղ, ուրիշ ոչինչ: Այս ամենին գալիս է գումարուն Յ. Կարապենցի ընտրած ժամանակների ու տարածությունների հակադրությունների տրամախօսության միջանկեալ ասարտը, որի հասցեատերը ըստ էության՝ Համաստեղն է: «*Ես հողի փերցը չեմ լսում, - ասացի, - կար ժամանակ, որ լսում էի, երբ պարանի էի (Համաստեղն է - Ս.Դ.): Այն ժամանակ անգամ աստղերի շշուկն էի լսում*»¹²: Խորն է այլաբանությունը՝ երբ ինքը Միջո էր: Իսկ հիմա՞: Հեղինակին արձագանգում է քաղաքակրթության տիրական դարձող ծայրը. «*Միրելիս, հող չունեմ, որ հողի փերցը լսեմ, - գրեթե բղանցի*»¹³:

Դաժան է կարծես, բայց անելի դաժան է Կարապենց գրողի, սփիւքահայ արձակագրի իրավի «պարտություն» խոստովանություն-արձագանգը Համաստեղի փերցենճեան յամառ կեցության ու ամերիկեան ամենակույ դիմակայության անկտրում ռոմանտիզմի դիմաց, թե՛ հայրենիքը չտեսած՝ գրել կարողանալը, չնայած «*գրչի մէջ համ ու բոյրի*» առկայության, հայրենի հողի տիրակալության բացակայության կնիքն ունի: Դա Յ. Կարապենցի ոճն է, զօրության վկայության ակամայ նահանջը: Կայ նոր քաղաքակրթության մէջ Յ. Կարապենցի գրական խիզախումը: Դա նոյն «օտարի» առջև մաքառումն է, անելի ստոյգ՝ արուեստագէտի դիմադրական ոգին, «նիւթի» դիմադրությունը, ինչպէս ընդունուած է որոշարկել ֆիզիկոսների աշխարհում:

Ի հարկէ, անհնար է շրջանցել Յ. Կարապենցի «անձանօթ հոգիների» լայն տեսողության մէջ միջավայրի գործօնը՝ հայկականի ու ամերիկեանի առարկայական մուտքերի սահմանում ազգային նախապաշարումների խաղարկումը, որը հետեւանք է ամերիկայի պաշտպանության եւ նրա խզման տագնապից ադթած զգայությունների:

Կայ օտարության եւս մէկը բեւեռը՝ ներքին խզումը («*Այսօր մի մարդ սպանեցին այգում*»): «*Համայնք լինելով հանդերձ, ամէն մէկը մի-մի կրգի էր: Ատում ու հակատում էին: Հակատում նոյնիսկ իրենց: Շապիկ Գարահիսար ու Ջեֆրորտն: Ամերիկեան անիրական էր: «Հաւ փու եւս փու» էին ասում եւ չէին հաւաքում իրենց աչքերին: Ի՛նչ ասել բարձրահասակ կապույտաչեայ այս «օտարներին»... Յաճախ խորթ էին հենց իրենց հետը»¹⁴: Այդ խորթությունը շատ անելի ցցուն է ընտանիքի ներսում, երբ հայրը ստիպուած է խոստովանել, որ ի ճանաչում անգամ զաւակներին:*

12 Նոյն տեղում:

13 Նոյն տեղում, էջ 155:

14 Յ. Կարապենց, Նոր աշխարհի իմն սերմնացանները, Կաշիկցտուն, 1975, էջ 13-14:

«*Արուցեց... սենեակները թերեւս նրանց պարունակության միջոցաւ հասկանալու եւ ձօրենալու նրանց: Անձանօթ սենեակներ էին: Իր փակ մէջ ինքը օտար էր: Նրան թուաց, թէ այցելու է»¹⁵:*

Ամիրիկեց, ազգայինի եւ օտարի բարդոյթը բնութագրող յատկանիշ է Յ. Կարապենցի ամբողջ արձակի համար՝ թե՛ պատմուածքներ, թե՛ վէպեր, թե՛ փորձագրություններ:

Բանալի բաներ - Յակոբ Կարապենց, պատմուածք, ազգայինի եւ օտարի բարդոյթ, ինքնութիւն, գրական երկխօսութիւն, Համաստեղ, հայկական եւ ամերիկեան միջավայրեր:

SUMMARY

Suren Danielyan

Doctor of Philological Sciences, Professor

PARALLELS OF NATIONALITY AND FOREIGNNESS IN HAKOB KARAPENTS' STORIES

The article examines the stories of Hakob Karapents, for which national questions and the revelation of the inner world of the heroes who appeared in the American environment, as foreigners, are common. The pieces, combined from different collections, let the author underline typological similarities with Hamastegh's creations. As for foreignness complex, it is a characteristic feature for the whole prose of the author.

Keywords: Hakob Karapents, story, national and foreignness complex, identity, literary dialogue, Hamastegh, Armenian and American environments.

15 Յ. Կարապենց, Միրելարար, Նիւ Եորք, 1981, էջ 199: